




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

73

191

Հայաստանի Կոմունիստական Կուսակցության
Կենտրոնական Կոմիտեի Վզդե-հաժիք.

324

№ 1.

Պրոֆեսորներ բոլոր յերկրների, միացե՛ք:



ԻՆՉ ԲԱՍ ԵՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ==

Յ Ե Վ

== ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ԸՆՏՐԵԼ



1922 թ.
ՅԵՐԵՎԱՆ

100
48-12



141-692

ՀԱՅԵԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐ ՈՒ ԳՅՈՒՂԱՅԻ ԸՆԿԵՐՆԵՐ,

Մօտիկ որեքս ամբողջ Թորոքային Հայաստանի բոլոր գյուղերն ու քաղաքները սկսելու յեն նոր Խորհուրդների ընտրութիւնը: Եւ նոր Խորհուրդները բոլորովին նոր պայմաններում գործի պիտի կաշեն՝ յերկիրը վերաշինելու աշխատանքի համար: Դուք շատ լավ գիտեք, ընկերներ, վոր մինչև Հոկտեմբերյան Հեղափոխութիւնը աշխարհիս յերեսին վոչ մի յերկիր չկար, վոր Խորհրդային ձեով կառավարելու: Խորհուրդների իշխանութիւնը բոլորովին նոր ձև ա և նրա ստեղծողն առաջին անգամը Խորհրդային Ռուսաստանի աշխատավոր բանվորն ու գյուղացին ա յեղել:

Ի՞նչպէս էյին կառավարվում առաջ

Դուք գիտեք, վոր մինչև Հոկտեմբերյան Հեղափոխութիւնը թէ Ռուսաստանը, թէ կապիտալիստական յերկրները կառավարվում էյին բուրժուազիայի ձեռքով: Ռուսական Մեծ Հեղափոխութիւնը ուս աշխատավորին ազատեց կապիտալիստի ձեռից: Բայց արտասահմանում աշխատավորութիւնը դեռ հլա կապիտալիստի ձեռին ա և վորովհետև իշխանութ ջան տերն ել կապիտալիստն ա, եզ պատճառով ել նա աշխատում ա իրա իշխանութիւնն ու յերկրի կառավարելու ձևն: Եւ ենպէս սարքի, վոր չլինի թէ հանկարծ աշխատավոր մարդ ա ձենը լսվի և նրա կամքն ել տիրող դառնա:

Բուրժուական յերկրները կառավարվում են ենպէս կոչված պարլամենտներով: Եզ պարլամենտները ընտրելու համար բուրժուազիան ամեն հար ել գործ ա դնում, վոր կարողանա իրա ուղած մարդկանցն անցկալ տալ: Եւ պարլամենտը: Դրա համար նրա ձեռի տակ ու նրան դո ւրեղ անելու պատրաստ կանգնած են բոլոր հակահեղափոխական գիտնական մարդիկը, բոլոր հոգեորականները, բոլոր ռուքանչիքն ու վաճառականները և մեկ ել իրա հիմնարկութիւն: Եւ քանզի ձեռնում ծառայող չինովնիկները: Բուրժուական

յերկրներն բոլոր լրագիրները ծախված են կապիտալիստներին, զորքը, պոլիցյեն և յեկեղեցին նրան հլուհպատակ են և եսպեսով նա կարողանում ա սխմել աշխատավոր ժողովուրդի վրա, հազար տեսակ խոստումներ տա և խաբելով բանվորին ու գյուղացուն նրա ձայներով իրա մարդկանցն անցկացնի պարլամենտը: Բան ա, յեթե մեկ-մեկ ենպես ա պատահում, վոր բանվորի ու գյուղացու մարդն ա անցկենում բուրժուական պարլամենտը, նրան ենպես են խաբում. գլխը յեղում, թխորում, բարձր պաշտոններ տալիս, վոր ես խեղճ մարդը մի անգամից շշմում ա ու շլիվում: Կաժաց-կամաց բուրժուազիան կարողանում ա նրան ել իրա մարդը, իրա վարձու ծառան դարձնել և հլա նրա միջոցով ել հուպ տալ աշխատավորության վրա:

Եսպես են կառավարվում բուրժուական յերկրները: Միայն հեղափոխությունն ա կարողանալու վերջ տալ ենտեղի բանվորության և գյուղացիության բաշած հազար ու մի նեղություններին: Թե ինչ տեսակ են եղ նեղությունները՝ մենք բոլորս ել շատ լավ գիտենք, ընկերներ, — վորովհետեւ ենքան ել շատ չի անցեջ են որից, յերբ մենք ել ցարական Ռուսաստանի աշխատավորության հետ միասին անքում եյինք բուրժուաշի ու կապիտալիստի լծի տակ:

Հոկտեմբերյան Հեղափոխությունը

1917 թվականի Փետրվարի հեղափոխությունը չկարողացավ աշխատավորի դրությունը լավացնի և իշխանությունը բանվոր-գյուղացիական դարձնի, վորովհետեւ յերկրի տերն ելի ֆեոդալ-կապիտալիստը, միայն Կնքան եր դանազանությունը, վոր մենչիկի ու ես-եր կոչվող սուղ-սոցիալիստները յեկան կանգնեցին կապիտալիստի կողքին, նրան թե ալին, ուժ ալին և ասին թե յեկեք միասին կառավարենք: Հալթաթ, ես տեսակ նշանդրեքից լավ պտուղ դուրս չեր գա: Բուրժուազիան ուժեղ եր, նրա ձեռքին եր յերկրի տնտեսությունը, նրա կամքին ծառա յեյին բոլոր գիտնականները, նա կրթված եր ու դուրս են նրան թե ու թիսունը եր: Շատ պարզ ա, ընկերներ, վոր ես պտակը պիտի բանդվեր, վորովհետեւ աշխատավորությունը, վոր ինքն եր հեղափոխությունն արել, ինքն եր կործանել թագաւորին, — ինքն ել ուզում եր իշխանության տերն ըլի և կառավարի:

Վոր իրա շահերին վոչ միայն ֆիսա չըլի, ալև ոգուտ ըլի։ Ահա ես մեծ ու հարկավոր գործը կատարեց Հոկտեմբերյան Հեղափոխությունը, վորը մի հարկածով տապալեց բուրժուազիայի իշխանությունն ու նրա ծառա սուտ-սոցիալիստներին եւ քչեց աշխարհքի չորս կողմը։

Հոկտեմբերյան հեղափոխությունը ծնունդ տվեց աշխատավորական իշխանության բոլորովին մի նոր ձևի-Խորհուրդներին։ Խորհուրդները դառան են մարմինները, վորտեղից աշխատավորությունը-բանվորն ու չքավոր գյուղացին-սկսեց կառավարել ու վերաշինել իրա սոցիալիստական հայրենիքն ենպես, վոր իրա շահերը պաշտպանվեն, վոր ինքը լինի իրա հալալ քրտինքով դատած պատեղների ու աշխատանքի տերն ու վայելողը։ Խորհուրդներն ենպես կազմվեցին, վոր չլինի թե ենտեղ ձայն ու տեղ ունենան են մի բուռը, մի վոհվակ կապիտալիստն ու բուրժուան, վոր յերկար դարեր նստած են յեղել աշխատավորի վզին ու ձծել են նրա արյունը, քրտինքը և վերջն ել՝ բանտերում փթացել, յա թե չե դուրս գցել փողոց, վոր հիվանդ ու անտեր կուտորվի։

Դժվարություններ

Իհարկե, են գլխից ու մի անգամից ամեն բան կարգի գըցելը շատ դժվար եր։ Վոչոք եղպես նպատակ ել չունիր։ Աշխատավորի համար շատ պարզ եր, վոր բուրժուազիան թեև տապալվեց, բայց նա դեռ ուժեղա, վորովհետև նա դարերի փորձ ունիր, գիտություն ունիր, կրթված եր, վոնց վոր ասում են, ազվեսի պես հնարագետ եր։ Հենց մի անգամից դիմել շինարարական աշխատանքի, առանց իրա պետության ուժն ու պաշտպանությունը դաժմացնելու աշխատավորությունը չեր կարող և չեր ել ուղի, վորովհետև եղ են ժամանակն եր, յերբ վոր մեր թշնամիքը հլա ամեն բոպե սեզում հյին մեզ սաղ-սաղ կուլ տան։ Յիվ դրա համար ել շատ պարզ ա, ընկերներ, թե ինչու չեր սկզբնական շրջանում մեր Խորհուրդների աշխատանք ավելի շատ յերկրի պաշտպանության և ապահովությանն ուղղված, քան թե մի ուրիշ, նոյնպես հարկավոր բանի։

Աշխատավորությունն են գլխից ել հասկացավ, վոր Խորհուրդները դասակարգային իշխանության մարմիններն են և

Նրանց միջոցով նա կարող ա և պետք ա ուժեղացնի և հիմնա-
վորի իրա դասակարգային տիրապետութիւնը բուրժուազիայի
վրա: Եւ նպատակով ել նա ահեհ, միջոց ձեռք առաւ, վրի խոր-
հուրդներում ներկայացված լինի միմիայն մեկ դասակարգը—
աշխատավորականը: Բայց, ի հարկե, ետեղ ել են դժվարութիւն-
ներն եին առաջ դալիս, վոր մի կողմից, աշխատավորութիւնն
եր դեռ անփորձ, իշխելու և յերկիր կառավարելու համար դեռ
անպատրաստ. իսկ մյուս կողմից, գրեզի կուլակն ու քաղաքի
դուքանչին, բուրժուան, չինովնիկը հլա կարողանում եյին մեկ-
մեկ նրա դամարը բռնել ու նրա կողքին նստել խորհուրդներում:

Սրանից հետո, դժվարութիւնն եր և են, վոր յերկիրը շա-
րունակ ստեղ ընդեղ դեռ հլա ալիկոծվում եր, աշխատավորու-
թյանը հանգիստ չեյին տալիս, վոր նա իրա գործին կենա, իրա
տունը շինի՝ իրա ուղածի պես, և եսպես խորհուրդների անդամ-
ները համ պատերազմի մասին պիտի մտածեյին, համ տնտեսու-
թյան, համ ել յերկրի հազար ու մի ուրիշ ցավերի ու կարիքների:

Վերջին հարիւրերը

Ես վերջին տարիները դրութիւնը շատ ա փոխվել, յեր-
կիրը խաղաղվել ա, պատերազմները վերջացել են և աշխա-
տավորութիւնը կարողանում ա իսկական շինարար աշխա-
տանքով զբաղվել իրա իշխանության դասակարգային գլխա-
վոր մարմիններում-խորհուրդներումը: Յեւ վորովհետեւ խոր-
հուրդների անդամները բոլորն ել աշխատավոր մարդիկ են, վոր
իրանց ժողովներին ու նիստերին հենց զուգրտող գութանի
ու մեքենայի վրայիցն են գալիս ու աշխատանքի հողիցն ել
կպած են, ևդ պատճառով ել նրանց համար շատ հեշտ ա
բոլոր գլխավոր ու մանր—մունր հարցերը լուծել, նրանք շա-
լաւ հասկանում են, թե յերկրին, նրա տնտեսությանը,
նրա պաշտպանությանն ու լուսավորությանն ի՞նչ ա
հարկավոր և վորն առաջ, վորը հետո,— եղ պատճառով ել խոր-
հուրդները հիմա սոցիալիստական պիտության հիմքն են դառել
և առանց նրանց վոչինչ չի կատարվում: Խորհուրդներում վոչ
միայն խոսում են, ինչպես բուրժուական պարլամենտներում,
այլ և գործ են անում և են հսկայական աշխատանքը, վոր վեր-
ջին տարիներս կատարվելա թե Ռուսաստանում և թե մեզանում,

բոլորն ել բանվորա-գյուղացիական թորհուրդների միջոցով ա, նրանց աշխատանքն ա, նրանց հունարնա: Հեղափոխության հինգ տարվա պատմությունը նրանց համար կյանքի դպրոց, փորձ և ուսում ա: Աշխատավորությունը տեսնում ա, թե վերն ա իրա իսկական ճանապարհը և լավ ել ճանաչում ա իրա բարեկամին ու թշնամուն: Հիմի յել նրան խաբել չի լինի:

Նոր օգնական Բաղաճականությունը

Մեր թորհրդային Ֆեդերացիայի կյանքը քանի գնում՝ դարգանումա, բայց ելի միջոցները պակասում են: Մանավանդ վոր մենք ամեն կողմից շրջապատված ենք կապիտալիստներով, վորոնք դեռ հա շեն ուզում թողնեն, վոր մենք ազատ չունչ քաշենք: Մեր յերկրների հազարավոր հարստությունները մնում են անմշակ, վորովհետե մենք միջոցներ չունենք նրանց բանացնելու, շահագործելու համար: Եդ պատճառով թորհրդային իշխանությունը դեռ անցյալ տարի հիմնավորեց տնտեսական նոր քաղաքականության ծրագիրը և գործի անցկացրեց: Դրանով ազատություն տրվեց մասնավոր առևտուրին, մասնավոր արդյունաբերությանը և այլն: Յեվ եսպես կուրակն ու բուրժուան ելի ժաժյեկան: Նրանք կարծեցին թե՝ վոր տնտեսական քաղաքականությունը փոխվեց, ուրեմն եսոր-եզուց կարգերն ել կփոխվեն և ելի իրանք կլեն յերկրի տերերը: Բայց թորհրդային իշխանությունը եդ զիջումն անելով՝ իշխանությունը բաց չի թողնում իրա ձեռքից, նա արթուն աչքի պես հսկում ա—և յերկրի մասնավոր արդյունաբերությունից ստացած հարկերով ու տուրքերով նրանց կողքին հիմք ա դնում իր խոշոր պետական արդյունաբերությանը, եսպես վոր գլխավորն ելի մնա իրա ձեռքին և յերբ վոր ժամանակը գա՝ նորից հուպ տա չափները կորցնելու վրա ծարավ կապիտալիստներին:

Բայց, ընկերներ, յեկեք-տեսեք, վոր եդ չարչիներն ու կուրակները, կապիտալիստն ու բուրժուան, հենց են իմանում թե իրանց տոնն ա յեկեկ և հիմա կաշվից դուրս են գալիս, վոր աշխատավորի հետ միասին մտնեն թորհուրդները և յերկիրը կառավարելուն ել մասնակցեն:

Լավ մարիֆաթա, խոսք չկա, լավ ել մուրադ ա, համա դուք շատ լավ հասկանում եք, ընկերներ, թե սրանից ինչ կա-

րող ա դուրս գա: Խորհրդային իշխանութիւնը նրա համար չի ստեղծված, վոր բանվորի և աշխատավոր գյուղացու կողքին գա և իրա համար տեղ անի նրանց իդարավոր թշնամին: Խորհուրդները հենց նրա համար ել ստեղծված են, վոր իրանց շինարար ու քաղաքական աշխատանքով վերջնականապես ջարդեն կուլակի, բուրժուայի և կապիտալիստի իշխանութիւնն ու եղ աղքուկ դասակարգի դոյութիւնը: Յեւ յեթե ետոր Խորհրդային իշխանութիւնն եղ զիջումն անում ա, հալքաթ վոր նա հաշվով ա անում, չափած-ձեւված ա անում և վոչ թե ասում ա,— դոները բաց ա, ինչ շուն ու գել կա, թող գա լցվի:

Ա՞յլ չպիտի բնորոշի խորհուրդներում

Մեզ անում ել, ընկերներ, նույն պատկերն ա: Խորհուրդների ընտրութիւններին ականջնելը խլացրած մուշտարիներ շատ կան: Բոլորն ել ուզում են վոնց ըլի, մի կերպ ներս խցկվեն. վոր ներսից քար ու քանդ անեն Խորհրդային իշխանութիւն հիմքերը: Ել հոգևորական, ել նախկին սովիցիակական, ել դուքանչի, ել անպաշտոն մնացած թագավորական չինովնիկ, ել դաշնակցա-կան պաշտոնյա, ել մաուզերիստ,— բոլորն ել հազրվել են: Բայց դուք, բանվոր ու գյուղացի ընկերներ, լավ պիտի իմանաք ձեր բանը: Սրանցից և՛ վոչ մեկը չպիտի ընտրվի ձեր Խորհուրդներում: Վոչ մեկը չպիտի նստի ձեր կողքին: Արյունի ու հալալ քրտինք-աշխատանքի գնով ձեռք բերած ձեր իշխանութիւնը նրա համար չի, վոր հիմա նստեք ու ջուխտ ախպոր պես կես անիք նրանց հետ, վոր հետո ել նրանք գան ու նստեն ձեր գլխին ու հլա դուրս ել անեն ձեզ ենտեղից:

Ի՞նչպես են կատարվում խորհուրդների բնորոշումները

Ի՞նչպե՛ս, ընկերներ, յեթե մեզ անում ել ընտրութիւնները կատարվելին ենպէս, ինչպես կատարվում են բուրժուական յերկրներում, են ժամանակ կարող ա պատահի, վոր մեր թշնամիների մուրազը կատարվեր: Բուրժուական յերկրներում քաղաքը կամ գյուղը բաժանվում են զանազան մասերի, նայած իրանց, բուրժուաների, հարմարութիւն հազար տեսակ չափ ու սահմաններ են հնարում, վոր չլինի թե բանվորն անցկենա ու գա իրանց կողքին նստի: Եղ բաժանումների ժամանակն ել ենպէս են

անում, վոր քաղաքի հարուստ թաղերիցը շատ մարդ անց կենա, քանվորական թաղերիցը՝ քիչ, և անցկացողն ել իրանց դուռն քլի, իրանց դուռնովը պար դա, իսկ գյուղերում առաջ են քաշում կուլակներին ու տերտերներին: Դուք բոլորդ ել շատ լավ հիշում եք, ընկերներ, թե ինչքան տերտեր ու կուլակ կար թեկուզ հենց Ռուսաստանի պարլամենտում—Պետական Դումայումը:

Պարզ ա, վոր Խորհուրդների ընտրությունն եղպես չի կարող կատարվի: Քանի վոր բանվորա-գյուղացիական Խորհուրդները աշխատավորական իշխանության դասակարգային մարմիններն են, վորոնց միջոցով նա իրա կամքն ա տարածում յերկրի վրա, ուրեմն նրանց ընտրություններն ել պիտի կատարվեն հիմնարկությունների մեջ: Հլա գեռ մինչև ընտրությունները աղետեղ կազմվում են հատուկ ցուցակները են վարդիանց անունների, վորոնց հոտը չպիտի լինի մեր բանվորա-գյուղացիական Խորհուրդներում: Եսպես մօքրվում են առաջուց մեր ընտրելիների ցուցակները: Իհարկե, ես ձևով ընտրություն կատարելու ժամանակը շատ քիչ հույս կա աշխատավորության սղրուկներին համար, վոր նրանք անցկենան ու նորից յերկրի տերը դառնան:

Ո՞վ ա եզ խոհուրդների աչքն ու պահապանը

Ընկերներ, գուք շատ լավ գիտեք թե են ի՞նչ ույժ եր, վոր առաջ բերեց Հոկտեմբերյան Հեղափոխությունը: Եդ ույժը կազմակերպված ու հզոր աշխատավոր առկարգն եր: Բայց ամեն մի դասակարգ իրա ղեկավարն ա ունենում, իրա առաջնորդը, վոր ցույց տա նրան իսկական ճանապարհը: Դրա համար գոյություն ունեն քաղաքական կուսակցությունները: Բանվոր դասակարգի անունից շատերն են խոսացել: Աշխարքիս երեսին վոչ մի բանն ենքան շատ չի, վորքան սոցիալիստական կուսակցությունները: Մենշևիկն ել ա իրան սոցիալիստ կոչում, ես-երն ել, գաշնակն ել, իսկ վոր արտասահմանը մտիկ անեք,—մարդու գլուխ կը շըշմի. ենքան շատ են ու ռանգ-ռանգ: Բայց մենք մեր աչքովը տեսանք, վոր հիշ բոլորն ել սուտ ու փուչ դուրս եկավ: Ստեղ մեղ գաշնակներն եյին ծախում բուրժուազիային, Վրաստանում՝ մենշևիկները, Ռուսաստանում՝ ես-երն ու մենշևիկը, իսկ արտասահմանում զանազան տեսակի սոցիալիստ կոչված բուրժուական լաքեյները գեռ մինչև կսոր իլ պար են ածում

իրանց բանվորութեանն ու նրա վիզը կոխում են կապիտալիստական լծի տակ:

Մեղանում եղպես չի հիմա: Հոկտեմբերյան Հեղափոխութեան ղեկավարն ու առաջնորդը դուրս եկավ Կոմունիստական կուսակցութեանը: Նա իր ձեռքն առավ հեղափոխական շարժումի ղեկավարութեանը և նա հիմք դրեց խորհրդային իշխանութեանը: Նրա արժեքն հսկողութեան տակ ու նրա ցուցմունքներով են կատարել մեր խորհուրդներն իրանց աշխատանքը, վերոմիտես նա յեր յեղել և հարել են նա յա աշխատավորութեան միակ ղեկավարը, վոր հարադատութեամբ սլաշտպանում ա աշխատավոր դասակարգի շահերը: Կոմունիստական կուսակցութեանն են անքուն պահապանն ա, վոր միշտ դայիմ կանգնած ա իրա գիրքերում, մտիկ ա անում հեռուները, խավարի մեջ նշմարումա ճամփեքն ու փոսերը, ծունն ու դուզը և կամաց-կամաց առաջ ա տանում մեր յերկրների սոցիալիստական նավը դեպի վերջնական հաղթութեան նավահանգիստը:

Բանվորա-գյուղացիական խորհուրդները աշխատավորական եդ մեծ կուսակցութեան աչքերն են ու նրա աջ թևիլը և եդ պատճառով ա, վոր ետոր չի կարելի յերեակայել վոչ խորհուրդներն առանց Կոմունիստական կուսակցութեան և վոչ ել Կոմունիստական կուսակցութեանն առանց խորհուրդների:

Ո՞վ պիտի բնորդի խորհուրդները

Աշխատավորական յերկրում իշխանութեանը պիտի լինի աշխատավորի ձեռքում: Նրանն ա իրավունքը,— դավթարն ել նրա ձեռքին պիտի լինի, զենքն ել Կոմունիստ բանվորն ու աշխատավոր գյուղացին և ազնիվ ու անխարդախ քաղաքացին, վորոնք պաշտպան են խորհրդային Կառավարութեանը— ահա սրանք են ձեր ընտրելիները: Սրանց կյանքի և ուժերի գնով ձեռք բերած ազատութեանը, սրանց ջանքերով վերածնված յերկիրը, սրանց քրտինքով վերաշինվող տնտեսութեանը դուք հալալ ու մաքուր պիտի պահեք ձեր ձեռքին և ցեխի մեջ չպիտի գցեք են կարմիր դրոշակը, վոր ձեր ձեռքն ա տվել Կարմիր Հոկտեմբերը և սրանով կապել ա ձեզ համաշխարհային պրոլետարիատին:

Ետոր հսկայական ջանքերով նոր-նոր գլուխ ա գալիս սո-

ցիալիստական ազատ պետութեան գաղափարը և ամբողջ աշխարհի աշխատավորութիւնը զարմացած մտիկ ա անում, թե ես վստիկ եմ մենք, ամեն կողմից շրջապատված բուրժուական գալիերով, մեր գոյութիւնը պահում ու դեռ հլա սահղծագործում ել ենք, կարգի ել ենք գցում քանդվածն ու ավերվածը: Յեվ ես բոլորը տեսնելով նա ել վոգեվորվում ա, թափ ա տալիս իրան, թե ա աւանում և հեռու չի արդեն են որը, յերբ վոր նա ել մեզ հետ կը միանա:

Ես որերում, ընկերներ, մենք ավելի սերտ պիտի կապվինք իրար, ավելի լավ պիտի ճանաչենք մեր բարեկամին ու թշնամուն և համաշխարհային կովի վերջին շրջանում մեր սուր ու հատու գենքը չպիտի տանք մեր արշունարբու հակառակորդին:

Կեցցեն բանվորա-գյուղացիական խորհուրդները!

Կեցցեն նրանց ղեկավար Կոմունիստական Կուսակցութիւնը!

Կեցցեն Խորհուրդների համաշխարհային Ֆեդերացիան!

Կեցցեն Խորհրդային Հայաստանի աշխատավոր ժողովուրդը!

Յեվ թող կորչեն բուրժուական և չարչիական բոլոր տականքները, վոր նորից ուղղում են իրանց ձեռքը գցեն աշխատավորական պետութեան ղեկին:



Հ Ր Ա Հ Ա Ն Ք

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԳԱՎԱՌԱՅԻՆ ՈՒ ԳԱՎԱՌԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ

Ա. Ընտրական հանձնաժողովների մասին

1. Գյուղական և քաղաքային խորհուրդների և գավառային ու գավառական խորհուրդների համագումարների կանոնադր ընդունված համար յուրաքանչյուր տարվա հոկտեմբերի 15-ից վոչ ուշ կազմվում են կենտրոնական, գավառական, գավառակային և գյուղական ընտրական հանձնաժողովներ:

2. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմվում է Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեին առնթեր հինգ հոգուց, վորոնց նշանակում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահությունը:

3. Գավառական ընտրական հանձնաժողովները կազմվում են գավառական Գործադիր Կոմիտեները յերեք հոգուց—նախագահին նշանակում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, մի անգամ գավառական Գործադիր Կոմիտեի ներկայացուցիչն է և մի անգամ Հ. Ս. Խ. Հ. Արհեստակցական միությունների խորհրդի ներկայացուցիչը:

4. Գավառակային ընտրական հանձնաժողովները կազմվում են յերեք հոգուց: Նախագահին նշանակում է գավառական ընտրական հանձնաժողովը, և յերկու անգամին գավառակային Գործադիր Կոմիտեն:

5. Գյուղական ընտրական հանձնաժողովների կազմն ենախագահ, վորին նշանակում է գավառակային ընտրական հանձնաժողովը և յերկու ներկայացուցիչ գյուղական խորհրդի կողմից:

6. Ընտրական հանձնաժողովները հատուկ տեխնիքական ապարատ չեն ստեղծում, այլ ոգտվում են իրենց վրա դրված պարտականությունները կատարելու համար համապատասխան վարչական բաժնի, գավառակային Գործադիր Կոմիտեի կամ գյուղական խորհրդի ապարատից:

7. Ընտրական հանձնաժողովի անդամներն իրենց աշխատանքի համար առանձին վարձրատրություն չեն ստանում:

8. Ընտրական հանձնաժողովների պարտականությունն է ա) վերահաս լինելու, վոր ընտրությունները կանոնավոր և ժամանակին կատարվեն համապատասխան շրջանում, բ) դիկտավարել ստորագրա ընտրական հանձնաժողովի և ընտրությունների համար նշանակված լիազորների աշխատանքը. գ) տեղեկություն տալ ընտրությունների ընթացքի մասին և նրանց վերաբերյալ բոլոր նյութերը մատուցանել պատշաճ Գործադիր կոմիտեին. դ) առաջարկություն անել Գործադիր կոմիտեներին ստորագրա ընտրական հանձնաժողովները ցրելու և նրանց առանձին անդամներին հեռացնելու մասին, ե) պահանջել ստորագրա ընտրական հանձնաժողովներից տեղեկագրել իրենց կատարած սշխատանքների մասին. զ) նշանակել իրենց ներկայացուցիչներին ստորագրա ընտրական հանձնաժողովներին նախագահ. բ) ընել բողոքներ և զանգառներ ստորագրա ընտրական հանձնաժողովների դեմ թ) նշանակել լիազորներ ընտրական ժողովներում ախագահելու համար:

9. Ընտրական իրավունքներից զրկված անձանց ցուցակները կազմելու մասին

9. Ընտրական իրավունքներից զրկված անձանց սկզբնական բաղաժների և գյուղերի) ցուցակները կազմում են են կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանված ձևով, ստուգում են և հրապարակում պատշաճ ընտրական հանձնաժողովները:

10. Ցուցակները կազմելու համար ընտրական հանձնաժողովները ողտադործում են տեղական վարչական բաժնի կամ գաւառակային Գործկոմի կամ գյուղխորհրդի կամ դատաւատնական աստատությունների տրամադրության տակ յնդած նյութերը:

11. Ցուցակները կազմելուց, կամ արդեն յնդածներն ստուգելուց հետո ընտրական հանձնաժողովը պարտական է մի որիակ ուղարկել տեղական Խորհրդին, մի արինակ վերագրա ընտրական հանձնաժողովին և հրատարակել ցուցակները ի գիտություն բնակչության:

12. Ընտրական հանձնաժողովների վորոշմամբ, ընտրական իրավունքներից զրկվածների ցուցակի մեջ մուծված



անձինք, ցուցակները հրատարակելուց հետո, յերեք որվա ընթացքում կարող են այդ վորոշման դեմ բողոք առվ վերադաս հանձնաժողովներին, մինչև իսկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին: Գանգատ տրվում է այն մարմնի ձեռքով, վորի գործողությունը բողոքարկվում է. վերջինը պարտավոր է գանգատը իր յիզրակացության հետ միասին տեղահացնել 24 ժամվա ընթացքում: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վորոշման դեմ բողոք տրվում է Հայաստանի Կենտրոնական Գործադիր կոմիտեի նախագահությանը:

13. Ընտրական իրավունքներից զրկվածների սկզբնական (քաղաքների և գյուղերի) ցուցակները պիտի հրատարակվեն պատշաճ խորհրդի ընտրությունից մի շաբաթ առաջ:

ՈՒՄ 2Ի ԿԱՐԵԼԻ ԸՆՏՐԵԼ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՄ

Շուտով սկսվում է Խորհուրդների ընտրությունները, ընտրական հանձնաժողովները պիտի իմանան, վոր Հայաստանի Խորհրդային հանրապետության սահմանադրության համաձայն ընտրելու և ընտրվելու իրավունքից զրկվում են. —

ա. Վաճուռ աշխատանք շահագործողները:

բ. Առանց աշխատանքի յեկամուտով ապրողները:

գ. Մասնավոր առևտրականները և առևտրական հանձնակատարները:

դ. Պուստակրոնները, կրոնական պաշտամունքների հոգևոր պաշտոնյաները:

ե. Նախկին կառավարությունների անդամները, նախկին վոստիկանության և քաղաքական խուզարկության գործակալները, քաղաքացիական կռիվ ժամանակ Խորհրդային իշխանության դեմ մասնակցություն ցույց տված խմբապետներն ու մասնակցիստները:

զ. Մահմանված կարգով հոգեկան իշխան և խեղադարձանաչվածները, ինչպես նաև խնամակալություն տակ զբաղվածները:

ԸՆՏՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ մասին

15. Խորհրդի անդամների ընտրությունը կատարվում է ընտրական ժողովներում:

16. Ընտրական ժողովները գումարում և ընտրական հանձնաժողովը կամ նրա լիազորը:

17. Ընտրական հանձնաժողովը և նրա լիազորը ընտրության որվա մասին պարտավոր են հայտարարել բնակչությանը վոչ ուշ քան 24 ժամ առաջ:

18. Ընտրական հանձնաժողովում կարող են ներկա լինել միայն ընտրական իրավունք ունեցողները:

19. Ժողովը բաց են անում և կառավարում են ընտրական հանձնաժողովի անդամները կամ ընտրության համար նշանակված լիազորները:

20. Ընտրական ժողովի բացումից հետո նախագահը ա) ծանոթացնում է ժողովականներին ընտրության կարգի հետ, բ) հայտարարում է ընտրության մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակը, գ) հայտարարում է թեկնածուների ցուցակը կամ առանձին թեկնածուի անունը,

21. Քվեարկության կարգը — ցուցակներով պիտի լինի թե առանձին-առանձին թեկնածուները պիտի քվեարկվեն, այլ և բաց կամ փակ քվեարկության խնդիրը չուծում և հետտրոնական հանձնաժողովը:

22. Խորհրդի անդամ ընտրված են համարվում քվեների պարզ մեծամասնությույն ստացողները:

23. Յեթե քվեարկությունը տեղի յե ունեցել ամբողջական ցուցակներով, անցած է համարվում քվեների մեծամասնությույնը շահած ցուցակը:

Մանրություն. — Յուրաքանչյուր ընտրական ժողով բացի պատգամավորներից ընտրում է նաև նրանց թեկնածուներ՝ պատգամավորների մի երրորդ թվով:

24. Ժողովի ընթացքի մասին կադմվում է արձանագրություն: Արձանագրությունը վավերացնում են ժողովի նախագահն ու քարտուղարը և ժողովականներից ցանկացողները:

25. Ընտրությունների առթիվ բոլոր դիմումներն ու զանգատները տրվում են զրավոր՝ համապատասխան ընտրական հանձնաժողովին ընտրությունը վերջանալուց հետոյ յերկու որվա ընթացքում:

26. Ընտրությունն անվավեր ճանաչելու դեպքում նոր ընտրությունը կառարվում է ոույն հրահանգով սահմանված կարգով:

27. Ընտրական հանձնաժողովների աշխատանքներն ավարտելուց հետո ընտրություններին վերաբերյալ բոլոր նյութերը հանձնվում են համապատասխան խորհրդին կամ գործկոմին:

Գավառային լեզ գավառական խորհուրդների համագումարներ հրավիրելու մասին

28. Գավառային և գավառական համագումարներ հրավիրում են վերադաս ընտրական հանձնաժողովները տարին մի անգամ համաձայն Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի 3-րդ նստաշրջանի վորոշման:


29. Խորհուրդների համագումարը բաց և անում պատշաճ Գործադիր Կոմիտեի նախագահը, վորից հետո ընտրվում և համագումարի նախագահությունը և մանդատային հանձնաժողով: Վերջինը պատգամավորների լիազորությունները ստուգելուց հետո ղեկուցում և առկա համագումարին, վորը նրա հիման վրա վորոշում և անում պատգամավորների իրավազորության մասին:

30. Համագումարի նախագահության պարտականությունն է՝ համագումարի ընդհանուր ղեկավարությունը, նրա նիստերի արձանագրությունները կազմելու և անկետային տոմսերի պատասխաններն ստանալու վերահսու լինել: Համագումարի նիստերի արձանագրությունները մնում են համապատասխան Գործկոմի գործերում իսկ նրանց պատճենները և անկետային տոմսերն ուղարկվում են վերադաս Գործադիր Կոմիտեին:

Գործադիր Կոմիտեի նախագահը կամ նախագահությունը ընտրվելուց հետո նախորդ Գործկոմը բոլոր գործերն ու գույքը հանձնում և նորընտիր Գործադիր Կոմիտեին, վորի համար արձանագրություն և կազմվում հանձնաժողովի և ընդունողի ստորագրությամբ: Այդ արձանագրությունը պահվում և համապատասխան Գործադիր Կոմիտեի գործերում:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահ՝
Ս. Համբարջումյան

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահի տեղակալ՝



2 Հոկտեմբերի 1922 թ.



-50-

ՀՀ Ազգային գրադարան



NL0838035

W92

141